մատուցուեցաւ Աւագ Սեղանին վրայ՝ ի Ս. Յակոբ։ Պատարագեց և քարոզեց լուսարարապետ Գեր. Տ. Եղիշէ Վրդ. Տէրտէրեան։ «Հայր մեր»ի ատեն կատարուեցաւ Ս. Էջմիածնի հանդիսաւոր մաղթանքը։ Ս. Պատարագի և մաղթանքի այն մասը որ կատարուեցաւ ժամը 10-11, ձայնասփիւռի տրուեցաւ Երուսաղէմի ձայնասփիւռի ընկերութեան կարգադրութեամբ։

✱ 17 Յունիս Գշ. — Ամեն. Ս. Պատրիարք Հայրը՝ ընկերակցութեամբ Հոգ. Տ. Հայկազուն Վրդ. Աբրահամեանի, Յոպպէ գնաց կալուածական և դատական խնդրոց առթիւ։

✱ 18 Յունիս Դշ. — Ամեն. Ս. Պատրիարք Հայրը՝ ընկերակցութեամբ Հոգ. Տ. Հայկազուն Վրդ. Աբրահամեանի, այցելեց Յոպպէի Ս. Գըլխադիր վարժարանը։ Ներկայ գտնուեցաւ առաւօտեան աղօթքին, օրհնեց աշակերտութիւնը և ամավերջի քննութեանց բացումը կատարեց։ Պտըտեցաւ բոլոր դասարանները և ներկայ գըտնըւեցաւ վերի դասարաններու քննութեանց։

— Երեկոյեան ժամը 6ին, Ամեն. Ս. Պատրիարք Հայրը ներկայ գտնուեցաւ Բարձր Գոմիսէրի ապարանքին մէջ ՄԱԿի պաղեստինեան քննիչ յանձնախումբին ի պատիւ տրուած ընդունելութեան։

— Երեկոյեան ժամը 8ին, Նորին Ամենապատուութիւնը նախագահեց Ժառանգաւորաց վարժարանի գրական երեկոյթին։

✱ 20 Յունիս Ուր. — Առաւօտեան ժամը 8ին Ամեն. Ս. Պատրիարք Հայրը՝ ընկերակցութեամբ Հոգ. Տ. Տ. Սուրէն, Հայկազուն և Պարգև վարդապետներու և Հոգ. Տ. Յարութիւն Աբեղայի, կատարեց Շղթայակրի կից նոր շինութեանց հիմնարկէքի արարողութիւնը։

✱ 21 Յունիս Շբ. — Կէսօրէ վերջ, ժամը 2ին Ամեն. Ս. Պատրիարք Հայրը Ս. Թարգմանչաց վարժարանի սրահին մէջ, վարժարանի տարեկան «պազար»ին բացումը կատարեց։

— Ըստ սովորութեան, զկնի երեկոյեան պաշտամունքին, Ամեն. Ս. Պատրիարք Հայրը կատարեց Ս. Գլխադրի ուխտի արարողութիւնը։

✱ 23 Յունիս Բշ. — Առաւօտեան ժամը 8ին, Ամեն. Ս. Պատրիարք Հայրը՝ Ժառանգաւորաց վարժարանի սրահին մէջ կատարեց ամավերջի քննութեանց բացման արարողութիւնը և ներկայ գտնուեցաւ բերանացի քննութեանց։

— Երեկոյեան ժամը 3ին, Գեր. Տ. Գէորգ Վրդ. Ճանոզեան, որ մի քանի օրերէ ի վեր անհանգիստ էր, Ֆրանսական հիւանդանոց փոխադրուեցաւ։

## ՆՈՐ ՊԱՇՏՕՆՆԵՐ

Պատ. Տնօրէն Ժողովը, Մատենադարանապետ Հոգ. Տ. Գրիգոր Վրդ. Ոսկանեանի տեղ, որ իբր ուսանող Լոնտոն մեկնեցաւ, Կիւլպէնկեան և Ձեռագրաց Մատենադարաններու տեսուչ նշանակեց Հոգ. Տ. Տիրայր Վրդ. Տէրվիշեանը։

Նոյնպէս, վանքիս աւագ թարգմանութեան պաշտօնը առժամաբար յանձնուեցաւ Պատ. Տնօրէն Ժողովոյ ատենապետ՝ Հոգ. Տ. Հայրիկ Վրդ. Ասլանեանի։

Իսկ հանդերձապետութեան և չարապահութեան պաշտօնները յանձնուեցան Ս. Աթոռոյս մատակարար Հոգ. Տ. Միւռոն Վրդ. Կրճիկեանի։

## ԺԱՄԱՆՈՒՄ

Ուրախութիւնն ունինք յայտնելու թէ Հոգ. Տ. Յարութիւն Աբղ. Մուշեան, որ չորս ամիսներէ ի վեր կը դարմանուէր Պէյրութի Ամերիկեան Հիւանդանոցին մէջ, իւլէրի և աղիքներու ցաւին համար, կրկին գործողութիւններէ վերջ դարմանուած ու առողջ վերադարձաւ Ս. Աթոռ։

Սիոն, յանուն Նորին Ամենապատուութիւն Ս. Պատրիարք Հօր, իր շնորհակալիքը կը յայտնէ Ամերիկեան Հիւանդանոցի մերազն և օտար բոլոր մեծատաղանդ բժիշկներուն ու ծառայողներուն, որոնք Աստուծոյ իբրև գործակիցներ, այնքան խնամքով գիտեն հսկել մարդերու կեանքին վրայ։

## ՏԽՐՈՒՆԻ

**ԿԻՐԱԿՈՍ ԿԻՐԱԿՈՍԵԱՆ**

Խորունկ ցաւով կ'արձանագրենք հոս, մահը Հաճինապիպլիցի Տիրացու Կիրակոս Կիրակոսեանին, որ տարիէ մը ի վեր միայն մաս կը կազմէր Ս. Աթոռոյս Միաբանութեան։ Հանգուցեալը ծառայասէր էր ու բարի և իր միակ մխիթարութիւնը կը գտնէր Ս. Աթոռոյ ծառայութեանը մէջ։

Հակառակ իր մասին տածուած բոլոր խնամքներուն, կարելի չեղաւ փրկել զինքը։

Հանգիստ իր հոգիին։

Proprietor - His Beatitude the Armenian Patriarch of Jerusalem. Armenian Patriarchate, Jerusalem.
Editor - Father Hagop Vartanian. Armenian Convent, Jerusalem.
Printed by the Armenian Convent Printing Press, Jerusalem.

digitised by A.R.A.R.@